

## Իրավական վերլուծություն 2017թ. հունվար ամսվա համար

### Երեխաների իրավունքները Հայաստանում կամ խեղված ճակատագրեր...

Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը, որովհետև ֆիզիկապես և հոգեպես իրենց պաշտպանելու հնարավորություն չունեն: Նրանց պաշտպանության գործառույթը, հիմնականում, ծնողների վրա է:

Երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են: Եվ կախված նրանից, թե որքանով են պաշտպանված երեխաների իրավունքները, կանխորոշվում է նաև տվյալ պետության և հասարակության ապագան:

Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են ինչպես միջազգային իրավական, այնպես էլ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում ևս համարվում է առաջնահերթ լուծման ենթակա խնդիր:

ՀՀ-ում երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

ՀՀ Սահմանադրությամբ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը, պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Չնայած այս ոլորտում մեծ թվով իրավական ակտերի առկայությանը, որոնք ուղղված են երաշխավորելու երեխայի իրավունքների և շահերի ապահովումը, այնուամենայնիվ, նրանց իրական պաշտպանվածության աստիճանը չի կարելի գնահատել բավարար:

Վերջին ժամանակներում, Հայաստանում ավելացել են ընտանիքում երեխաների բռնության և սպանության դեպքերը, որը և խոսում է պետական պաշտպանվածության թուլացման և/կամ լիազոր մարմինների անտարբերության մասին:

ՀՀ Պետական վիճակագրական տվյալների բացակայության<sup>1</sup> պատճառով դժվար է ամբողջական պատկերացում կազմել հանրապետությունում երեխաների հանդեպ կիրառվող բռնության չափերի և ձևերի մասին: Սակայն մի շարք կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները հաստատում են հանրապետությունում երևույթի առկայությունը և արձանագրում բռնությունների ընկալման գրեթե նույն՝ միջազգային մոդելը: Այսպես, ՄԱԿ-ի Բնակչության

<sup>1</sup> Հարց է ծագում, թե ինչո՞ւ այս տվյալների վիճակագրություն պետպատվերով չի իրականացվում, և մշտապես պետք է հիմնվենք միջազգային կառույցների աջակցությամբ կամ ՀԿ-ների իրականացրած ծրագրերի արդյունքների վրա, այն դեպքում, երբ դա պետության գլխավոր խնդիրն է: Եվ պատկան մարմինները, որոնք կոչված են իրականացնելու երեխաների պաշտպանությունը, հաշվետու չեն պետությանը:

հիմնադրամի աջակցությամբ 2006թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և ՀՀ ազգային վիճակագրության ծառայության կողմից իրականացված «Ընտանիք» ինստիտուտի հետազոտության արդյունքների համաձայն հայ իրականությունում կա բռնությունների որոշակի կայուն ընկալում, ըստ որի և ֆիզիկական, և հոգեբանական բռնություններն անընդունելի են համարվում ընտանիքի բոլոր անդամների հանդեպ: Սակայն գրանցվել են նաև որոշակի առանձնահատկություններ. օրինակ՝ հարցման մասնակիցների մի մասի կողմից հոգեբանական բռնությունները չեն կարևորվում այնպես, ինչպես ֆիզիկական բռնությունները:

Սույն խնդրի առնչությամբ վերջին հետազոտությունը 2014թ հունվար-հուլիս ամիսներին իրականացված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից «Երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ» հետազոտությունն է, որի նպատակն էր վերլուծել ՀՀ-ում երեխաների նկատմամբ կիրառվող բռնության տարածվածության աստիճանը, տեսակները, դրանց պատճառներն ու հետևանքները: Հետազոտությունն անցկացվել է բոլոր մարզերում՝ պահպանելով գյուղ-քաղաք համամասնությունը, առնվազն մեկ անչափահաս երեխա ունեցող 1215 ընտանիքներում: Հետազոտության մասնակիցների 44%-ը համարում է, որ մեր հասարակության մեջ երեխաների նկատմամբ բռնությունն այն խնդիրներից է, որը հրատապ լուծում է պահանջում: Հարցվածների 59%-ը համարում է, որ ընտանիքներում առավել տարածված է ֆիզիկական բռնությունը և/կամ ֆիզիկական պատիժը, 43%-ը նշել է հոգեբանական բռնությունը, 30%՝ անտեսումը, 4%-ը՝ սեռական բռնությունը և միայն 11%-ը ասել է, որ ոչ մի բռնության տեսակ էլ տարածված չէ: Հետազոտության մասնակիցները, որպես երեխայի նկատմամբ բռնություն, նշել են՝ ծեծելը, տարբեր առարկաներով հարվածելը (83%), մութ սենյակում փակելը (73%), քաղցած թողնելը կամ չկերակրելը (71%), սպառնալը կամ ահաբեկելը (64%), երեխային անտեսելը (առանց ուշադրության և խնամքի թողնելը) և երեխային աշխատել ստիպելը (59%), մյուս ծնողի հետ շփումը արգելելը (58%), երեխային ծաղրելը և/կամ վիրավորելը (56%), երեխային ապտակելը, հրմշտելը (43%), հարազատի կամ ընկերների հետ շփումը արգելելը (45%), երեխայի արտաքին տեսքը, պահվածքը, մտավոր ունակությունները անընդհատ քննադատելը (46%): Հարցվածների 36%-ը փաստել են նաև, որ իրենց երեխաներն ընտանիքում երբեմն ենթարկվում են բռնության, հիմնականում՝ ֆիզիկական բռնության և/կամ ֆիզիկական պատժի (59%), հոգեբանական բռնության (58%), անտեսման (6%): Ի դեպ, 82 %-ը մոր կողմից, 50%-ը՝ հոր կողմից (քաղվածք ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման թիվ 1 հավելված՝ Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ դեմ պայքարի հայեցակարգից):

Հայաստանում անչափահասների նկատմամբ ծնողների կողմից կիրառվող բռնության վերաբերյալ ստույգ վիճակագրություն չկա: Բարձրաձայնվող դեպքերի հիման վրա վիճակագրական տվյալներն ամփոփում է ՀՀ Ոստիկանությունը՝ ընտանեկան բռնությունների ընդհանուր համատեքստում: Ըստ այդմ՝ 2012 թ. արձանագրվել է ընտանեկան բռնության 766, 2013 թ.՝ 500, 2014 թ.՝ 575, իսկ 2015 թ.՝ 793, 2016 թ.-ի 11 ամիսներին՝ 600 դեպք:

Անչափահասների նկատմամբ ծնողների կողմից կիրառվող ընտանեկան բռնության պատճառները հետևյալն են.

1. Ծնողներն իրենք էլ են իրենց մանկության տարիներին զգացել ընտանեկան բռնության ազդեցությունը, որի արդյունքում դրսևորում են ագրեսիվ վարք:
2. Հիմնականում պայմանավորված է սոցիալ-տնտեսական անկայուն վիճակով, հոգեբանական ընկճվածությամբ, բացասական լիցքերի կուտակմամբ, որն էլ դառնում է երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության կիրառման պատճառ:
3. Ծնողների կողմից ֆիզիկական կամ մտավոր խանգարումները, ալկոհոլից, թմրանյութերից կախվածությունը, խաղամոլությունը և այլն:
4. Երբ ընտանիքում առկա է բռնություն ծնողների միջև. սա վերջնական արդյունքում դրսևորվում է նաև երեխաների նկատմամբ և այլն:

Անչափահասներին ՀՀ-ում ծնողները օգտագործում են նաև տնտեսական շահագործման նպատակով՝ ֆինանսի հայթայթման (խղճահարություն ստեղծելով գումար կամ սնունդ ձեռք բերել), մուրացկանության և այլն: Սա առաջնային բխում է ընտանիքների սոցիալական ծայրահեղ դրությունից, որն իր ազդեցությունն է ունենում նաև ծնող-երեխա փախհարաբերությունների կառուցման տիրույթում:

Թերևս, ամենավտանգավոր բռնության տեսակները համարվում են ֆիզիկականն ու հոգեբանականը: Այս երկուսի համակցման արդյունքում կարող է ի հայտ գալ հոգեբանական անհավասարակշիռ վիճակ, որն էլ հետագայում կարող է անդրադառնալ ինչպես անհատի ֆիզիկական-հոգեբանական առողջության, այնպես էլ անձնական հարաբերությունների կառուցման վրա<sup>2</sup>:

Ուստի չպետք է մոռանալ, որ ծնողը հանդիսանում է երեխային կողմնակի ազդեցություններից պաշտպանման, անվտանգության ապահովման և բռնության կանխարգելման երաշխիք:

Բացի ծնողից, գործում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որի հիմքը խնամակալության և հոգաբարձության մարմինն է, այնուհետև գալիս են մարզային կառույցները, որոնք կազմված են 4-5 անձանցից, ովքեր սպասարկում են ամբողջ մարզի բնակչությունը: Իսկ երրորդ աստիճանն ազգային հանձնաժողովն է, որը ղեկավարում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

Երեխայի պաշտպանության ամենակարևոր պարտավորությունները՝ 40-ից ավելի լիազորություններ, դրված են մի մարմնի վրա՝ Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), որոնցից շատերն անգամ տեղյակ չեն, որ իրենք են այդ հիմնարար խնդիրներով զբաղվող պետական լիազոր մարմինը:

Ըստ ՀՀ «Ընտանեկան օրենսգրքի»՝ «Ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ սույն օրենսգրքով

---

<sup>2</sup> Մեր անտարբերության, անփութության և հովանավորչության /աշխատանքի ընդունելիս/ պատճառով մենք ստեղծում ենք հասարակության ոչ լիարժեք անդամներ, իսկ հետո զարմանում, թե որտեղից այդքան շատ անհավասարակշիռ, անբարո, դաժան, ագրեսիվ վարքագծով մարդիկ մեր հասարակության մեջ. դրանք բոլորը գալիս են մանկությունից, ընտանիքից:

նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից»: Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքային կառույցներ են՝ վարչական շրջանների, քաղաքապետարանների կամ գյուղապետարանների ենթակայության ներքո: Այս կառույցների անդամները քաղաքապետարանների կամ գյուղապետարանների տարբեր բաժինների աշխատակիցներ են, և այս կառույցում ներգրավված են հասարակական հիմունքներով՝ անվճար: Ընտանեկան օրենսգիրքը հստակ ամրագրում է, որ եթե երեխայի կյանքին վտանգ է սպառնում, այդ կառույցը միջամտելու հստակ գործառույթ ունի: Բայց այստեղ ևս մեկ հարց է առաջանում. ինչպե՞ս և ո՞վ պետք է գնահատի՝ երեխայի կյանքին վտանգ սպառնո՞ւմ է, թե ոչ: Գնահատումը մասնագիտական կարողություն է, որին խնամակալության մարմնի ներկայացուցիչները ուղղակի չեն տիրապետում, որովհետև չեն ստացել համապատասխան կրթություն: Ըստ էության, խնամակալության և հոգաբարձության մարմիններից զատ խախտված իրավունքով զբաղվող այլ կառույց ուղղակի չկա: Ստացվում է, որ հարցերը, որոնց մասին բարձրաձայնվում են, լուծում ստանում են բացառապես իրավական մակարդակում, մասնավոր դեպքերում, իսկ սոցիալական հարթության վրա խնդիրը մնում է չլուծված:

Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում, այդ թվում՝ երեխաներին խնամքի ու պաշտպանության հաստատություններ ուղեգրելու հարցերում կարևոր դերակատարում ունեցող սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններն իրենց գործունեության ընթացքում սահմանափակվում են, մասնավորապես՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, մարզպետարաններին, քաղաքապետարաններին շահառուների մասին տարբեր տվյալների տրամադրումով, հաշվետվություններ ներկայացնելով,

- շահառուներին՝ դեպի սոցիալական ապահովության և առողջապահության վարչություն կամ մարզպետի, համայնքի ղեկավարի մոտ ուղղորդելով,

- պասիվ գործելակերպով՝ ֆինանսական խնդիրներից բացի, շահառու խմբերի մյուս կարիքները գրեթե չեն գնահատում, հետևաբար՝ ակտիվորեն չեն աջակցում և ուղղորդում շահառուին:

**Ստորև ներկայացվում է մի դեպք, որը առավել վառ կներկայացնի լիազոր մարմինների աշխատանքը.**

2017 թվականի հունվարի 11-ին, իրավաբանիս շահառուներից մեկից հեռախոսային զանգ ստացա, ով հայտնեց, որ Գյումրի քաղաքի տնակային թաղամասերից մեկում անչափահաս երեխայի կյանքին վտանգ է սպառնում. մոտ 4 տարեկան աղջիկ երեխան հաճախակի մնում է տանը միայնակ և ենթարկվում է բռնության ծնողների կողմից:

Իմ այն հարցին, թե ինչո՞ւ չի դիմում ոստիկանություն և այլ պետական կառույցների, շահառուն նշեց, որ չի վստահում որևէ պետական կառույցի և չի ցանկանում ինքը հետագայում խնդիրներ ունենալ:

Այս խնդրի մասին իրավաբանիս կողմից ահագանգ արվեց՝

1. Գյումրի քաղաքապետարան՝ հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովին,

2. Շիրակի մարզպետարան՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, որտեղից էլ զանգ էր արվել ՀՀ ոստիկանության Կումայրիի բաժին:

Վերոնշյալ 3 կառույցների ներկայացուցիչների հետ 12.01.2017թ-ին տնայց արվեց: Նշեմ, որ երեք կառույցի ներկայացուցիչներն էլ ծանոթ են եղել այդ ընտանիքին (շահառու ընտանիք), նրանց միջոցով ճշտվեց նաև հասցեն:

Տնայցի արդյունքում պարզվեց, որ նշված հասցեում փաստացի բնակվում են 1960թ-ին ծնված Հ.Հ-ն և նրա անչափահաս դուստրը՝ ծնված 16.03.2013թ.: Ըստ Հ.Հ-ի երեխայի մայրը տառապում է հոգեկան հիվանդությամբ և տվյալ պահին գտնվում էր Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում:

Նշեմ, որ ընտանիքը գտնվում էր ծայրահեղ աղքատության մեջ: Երեխայի հայրը հերքեց այն լուրը, որ երեխան տանը մենակ է մնում:

Ըստ պետական մարմինների ներկայացուցիչների չկար որևէ արտառոց բան, սովորական ընտանիք էր և երեխային էլ որևէ վտանգ չէր սպառնում: Բնութագրվեց, որ ընտանիքն ունի սոցիալական աջակցության կարիք, տրվեցին խոստումներ վառեփայտ և սնունդ տրամադրելու մասին, որով էլ <<ավարտվեց>> խնդիրը:

Նշեմ, որ Գյումրու քաղաքապետարանի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի քարտուղար Թերեզա Գրիգորյանի ասելով, այդ ընտանիքը որպես խոցելի ընտանիք եղել է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում, անգամ հանձնաժողովը որոշում է կայացրել երեխային խնամքի կենտրոն տանելու մասին, սակայն մայրը թույլ չի տվել: Վերջինս սպառնացել և հարձակվել է նաև հանձնաժողովի անդամների վրա: Որից հետո հանձնաժողովը բավարարվել է միայն սոցիալական օգնություն հատկացնելով:

2017 թվականի հունվարի 16-ին իրավաբանիս և Կենտրոնի աշխատակից Արմեն Պետրոսյանի հետ երկրորդ տնայցն արվեց տվյալ հասցե: Այցի պահին, տնակի դուռը փակ էր, Հ.Հ-ն գտնվում էր աշխատանքի մեջ (գրադվում է ցանկացած պատահական աշխատանքով), ով մեր զանգից հետո եկավ և բացեց տնակի դուռը: Պարզվեց, որ երեխան տանը իսկապես մենակ էր (կատվի հետ), պառկած անկողնու մեջ (հայրը հայտնեց, որ ինքն է երեխային պառկեցրել, որ չմրսի): Տնակը սոսկալի ցուրտ էր, այն գտնվում էր անմխիթար վիճակում, զուրկ կոմունալ բոլոր հարմարություններից և սանիտարահիգիենիկ տարրական պայմաններից: Երեխայի մահճակալի մոտ դրված էր էլեկտրական վառարան, որն այդ պահին չնայած անջատված էր, բայց և վտանգ էր ներկայացնում (երեխան շատ հեշտությամբ կարող էր էլեկտրական վառարանը միացնել): Հ.Հ-ն չժխտեց այն, որ երբ ինքը գտնվում է աշխատանքի մեջ, երեխան տանը մենակ է մնում և ապահովության համար տան դուռն ինքը կողպում է:

Պարզվեց, որ երեխան չի հաճախում ո՛չ մանկապարտեզ և ո՛չ էլ այլ խմբակներ, շփվում է կատվի հետ, որն, իր խոսքով, մազ է տալիս և քնած ժամանակ ցատկում է իր վրա:

Ըստ Հ.Հ-ի, երեխայի մայրը երբ տանն է լինում, հաճախակի ծեծում և նվաստացնում է երեխային (երեխան էլ էր ասում, որ իր մայրը գիժ է): Պատմեց նաև, որ դեռ բարուր ժամանակ երեխային շարտել է փողոց, մեքենաների անիվների տակ, երեխային այնպես է ծեծել, որ արյուն գա, որից մայրը հանգստություն է ստացել:

**Փաստորեն, այսքան ժամանակ այդ երեխան ենթարկվել է ոչ միայն ֆիզիկական բռնության, այլև՝ հոգեկան, քանի որ, մշտապես ներկա է գտնվել ծնողների վեճերին ու ծեծկռտուքին, իսկ ոլորտի պատասխանատուները գտել են, որ սա ընդամենը սոցիալական խնդիր է:**

**Ի դեպ, երեխան այդ ընտանիք սոցիալական նպաստ, տարբեր կառույցներից սնունդ, վառելիքայտ, հագուստ և նմանատիպ այլ օգնություն ներմուծող օղակ է, դա է հիմնական պատճառը, որ ծնողները նրան չեն ցանկացել հանձնել հոգածության որևէ կենտրոն:**

Հ.Հ-ի հետ երկար զրույցի արդյունքում, հայրը ինքը ցանկություն հայտնեց երեխային տանել որևէ պետական հաստատություն, որտեղ երեխան չի մեռնի սովից, ցրտից և մոր դաժանությունից: Հ.Հ-ն մեզ խնդրեց, որ օգնենք նրան այդ հարցում, քանի որ, ըստ նրա, Գյումրու քաղաքապետարանի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովը լավ չի տրամադրված իր անձի նկատմամբ և եթե ինքը դիմի՝ մերժում կատանա: Իսկ երբ երեխային հարցրեցինք, թե ուզո՞ւմ է գնալ մանկապարտեզ, իսկ շաբաթ և կիրակի վերադառնալ տուն, ուրախացավ և համաձայնեց:

Նույն օրը իրավաբանիս կողմից գրություն ուղարկվեց Գյումրու քաղաքապետին: Հ.Հ-ն նույնպես ներկայացավ քաղաքապետարան և դիմում գրեց՝ երեխային հոգածության կենտրոն տեղափոխելու մասին:

Արդյունքում, 17.01.2017թ-ին կազմվեց հանձնաժողով, ում միջոցով երեխան տեղափոխվեց Գյումրու Թոչունյան տուն երեխաների խնամքի կենտրոն, և այնտեղ կապրի մինչև Գյումրու քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը:

**Պետք է արձանագրեմ, որ պետական մարմինների անգործությամբ խախտվել էին Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի մի շարք դրույթներ (այսուհետ՝ Օրենք), այսպես.**

**- Օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված է, որ երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված համապատասխան պետական մարմինները:**

*Տվյալ մարմիններն ընդամենը բավարարվել են տարին մեկ անգամ ինչ որ սոցիալական աջակցություն տրամադրել այդ ընտանիքին, որն էլ խթան է հանդիսացել երեխային ամեն գնով պահել «ընտանիքում», քանի որ բոլոր տեսակի օգնությունները երեխայի անվան տակ են ստացել: Սակայն խնդիրն այստեղ առավել խորն է, քան միայն սոցիալականը:*

- **Օրենքի 8 հոդվածի** համաձայն, երեխան ունի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք, որի պատասխանատուները ծնողներն են, իսկ ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցադրում է համապատասխան օգնություն:

*Այս հարցում էլ, պետական մարմիններն անգործության են եղել մատնված:*

- **Օրենքի 9 հոդվածով** սահմանված է բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը:

*Այն կրկին այս դեպքում չի գործել, երեխան ենթարկվել է ինչպես ֆիզիկական բռնության, այնպես էլ հոգեկան, քանի որ իր աչքի առաջ հայրը մշտապես ծեծել է մորը, մայրը ագրեսիվ վարք է ցուցաբերել թե՛ իր, թե՛ հոր նկատմամբ:*

- **Օրենքի 13 հոդվածով** սահմանված է, որ երեխայի խնամքը եւ դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաեւ պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջապահության պահպանման, ընտանիքում եւ հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:

Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը եւ դաստիարակությունն ապահովելու նպատակով **պետությունը եւ նրա համապատասխան մարմիններն** օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը:

*Իսկ ի՞նչ էր արել պետությունն այս ընտանիքի, և մասնավորապես երեխայի համար. մեկ երկու անգամ փայտ, սնունդ և սոցիալական նպաստ էր տվել, այդքանով ավարտել էր իր գործառույթները:*

Այս դեպքը միակը չէ, ընդամենը այս մասին տեղեկացանք մենք՝ հասարակական կազմակերպության աշխատակիցներս և մի գուցե կանխեցինք սպասվելիք ողբերգությունը: Իսկ փաստերը ցույց են տալիս, որ նման ռիսկային խմբի ընտանիքների ճակատագրերով, հիմնականում, պետական կառույցները հետաքրքրվում են այն դեպքում, երբ գրանցվում է երեխայի սպանության դեպք:

### **Օրինակներ.**

1. 2016 թվականի դեկտեմբերի 19-ին Սպիտակ քաղաքի Այգեստան փողոցի տներից մեկում հայտնաբերել էր 1971 թ.-ին ծնված կնոջ դի՝ կախված վիճակում, իսկ ննջասենյակում՝ տանտիրուհու երկու դուստրերը՝ մահացած: Երեխաները 5 և 7 տարեկան էին: Նախնական վարկածով կինը խեղդամահ էր

արել երեխաներին, ապա՝ ինքնասպան եղել: 45-ամյա կինը 2013 թվականից հաշվառված է եղել Սպիտակի պոլիկլինիկայի հոգեբուժական կաբինետում: Ամուսնուց բաժանվելուց հետո երեխաները մնացել են նրա խնամքին:

2. 2011 թվականի սեպտեմբերի 6-ին 34-ամյա Ռոզա Ալոյանը, տանը խեղդամահ է արել իր երկու դեռահաս՝ 6 և 4 ամյա երեխաներին և փակելով դուռը՝ հեռացել է:

Երեխային իր հանդեպ ֆիզիկական, հոգեկան, սեռական բռնությունից, երեխային շահագործելուց, ինչպես նաև ծնողի կողմից երեխայի անտեսումից պաշտպանելուն ուղղված բազմաթիվ կարևորագույն դրույթներ տեղ են գտել ՀՀ քրեական օրենսգրքում: Հենց քրեական օրենսգրքով է նախատեսված երեխայի նկատմամբ բռնության լուրջ դրսևորումների համար առավել խիստ պատժատեսակներ:

Սակայն խնդիրն այն չէ, թե ի՞նչ և որքա՞ն խիստ պատժամիջոցներ են կիրառվելու, այլ այն, որ եթե չլինի անտարբերություն, եթե չլինի պատասխանատու անձանց կողմից անտարբերություն, եթե իրոք պետությունը կատարի իր վրա դրված պարտականությունը, չենք ունենա խեղված ճակատագրերով երեխաներ և ողբերգական դեպքեր:

Վանուհի Գասպարյան,  
Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական  
կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան